# «Գերագույն իշխանությունները» չեն տաիում խոստումները

## Շարունակվում են Շահումյանի հայկական գյուղերի գնդակոծումները

Շահումյանի շրջանի Էրքեջ գյուղում հուլիսի 21-ին սկսված մարտը ծավալվելով հասել է նաև Վերիշեն, որը շրջանի ամենամեծ հայաբնակ գյուղն է: Գյուղերը գնդակոծվում են տանկերից և ուղղաթիռներից: Վերջիններս պտտվում են գյուղերի վրա մոտ 40-50 մետր բարձրությամբ: Գյուղերի շրջակայքում զինվորական ուղղաթիռներից իջեցվել են դեսանտայիններ, որոնք մարտի են բռնվել անտառում ծվարած տեղաբնակների հետ: Հուլիսի 23-ի նախնական տեղեկությունների համաձայն, կան կորուստներ երկու կողմից, սակայն դրանց թիվը ճշտել անհնար է, քանի որ մարտերը շարունակվում են և գործողությունները կատարվում են անտառներում: Հայաստանի հանրապետության կողմից կատարված հարցադրումներին Խորհրդային կենտրոնական իշխանությունները պատասխանում են մի բան, սակայն անում՝ հակառակը: Հայ բնակչության տեղահանությունը փաստորեն շարունակվում է Ադրբեջանի տարածքում: